

5220

ԴՈՒԲԵՆ ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԻԳՐԱՆՅԱՆ

(Մեհակոյան 80-ամյակի առթիվ)

78(47.925).092

S - 57թ

ՍՏԶՐԱՏ - 1936 Ք.

1010

41203



18 APR 2013

25 OCT 2010



4074

3220

0105 130 89

78(47.925)092

S-57p

ՌՈՒԻԲԵՆ ՔԵՐԼԵՄԵԶՅԱՆ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԻԳՐԱՆՅԱՆ

(Ծննդյան 80-ամյակի առթիվ)

1010
41203



9365



ՔԵՐԵՎԱՆ — ԳԵՏՀՐԱՏ — 1936 թ.

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԾԵՐ

1.

Հանրապետութեան ժողովրդական կոմպոզիտոր Նիկողայոս Տիգրանյանը բոլորեց իր ծննդյան 80-ամյակը:


Այս հարուստ կյանքի 55 տարին անցել է ստեղծագործական ուղիներով. 55 տարի շարունակ, Նիկողայոս Տիգրանյանը հանդիսացել է մեր յերաժշտական կուլտուրայի անխոնջ ու համեստ աշխատավորը: Անգամ այսօր, ութսունամյա պատկառելի ծերունին շարունակում է ստեղծագործել: Ութ տասնյակ տարիները չեն կարողացել մթազնել նրա ստեղծագործական պայծառ միտքը:

Այն կուլտուրական բազաժը, վոր նա 55 տարի շարունակ կրել է իր ուսերին, շատ արժեքավոր և հարուստ մատերիալ ունի իր մեջ: Յեւլ այստեղ ամենից կարևորն այդ ժառանգութեան դեմոկրատիկ տարրն է: Նիկողայոս Տիգրանյանի կերտած արվեստը, վորտեղ գլխավոր առանցքը հանդիսանում են իրանական կլասիկ յերկերի մշակույթը և ապա հայկական ժողովրդական պարերը, վրացական ու քրդական մելոդիաները, շատ կարևոր արժեք է, արժանի մանրամասն ու անմոռախիռութեան և զնահատանքի:

Կոմսոգիտոր Նիկողայոս Տիգրանյանի հայրը Թադեոս Նազարեթովիչ Տիգրանյանը ծնվել է 1823 թվին Ղարս քաղաքում: Մանուկ հասակում տեղափոխվում է Թիֆլիս և մտնում կլասիկական գիմնազիան, վերջնական ավարտում է 19 տարեկան հասակում: Միջնակարգ կրթութուն ստանալուց հետո, Թադեոս Տիգրանյանը նվիրվում է գինվորական ծառայութեան: Նա մասնակցել է ռուս-թրքական պատերազմին (1877—1878 թ.):

Կարճ ժամանակից հետո, Թադեոս Տիգրանյանը բնակութուն է հաստատում Ալեքսանդրապոլում: Այստեղ նա ամուսնանում է Յերանուհի Գորոյանի հետ, վերջնական ժամանակ համարվում երկրթված և լավ ուսում առած մի աղջիկ: Թե՛ Թադեոս Տիգրանյանը և թե՛ Յերանուհի Գորոյան—Տիգրանյանը լավ գիտեցին հայերեն, ռուսերեն և թուրքերեն լեզուները. սիրում էին զրահանութունը և մեծ արժեք էյին տալիս յերաժշտութեան:

Սրանց յերկրորդ վորդին Նիկողայոսը, ապառազ կոմսոգիտորը ծնվել է 1856 թվի ոգոստոսի 19-ին (հին տոմարով) Ալեքսանդրապոլ քաղաքում: Վեց տարեկան հասակում, յերեսան 1862 թվին մտնում է Ալեքսանդրապոլի հայ կաթողիկոսերի դպրոց: Իննը տարեկան հասակում, այդ առողջ և կայտառ յերեսան ծաղիկ հիվանդութուն է ստանում, վորի հետևանքով զրկվում է աչքերի լույսից: Տեղական բժշկութունը չի կարողանում մանուկին ապաքինել: Չեռք առած բոլոր միջոցները զուր են անցնում:



Ն. Տիգրանյանը 8 տարեկան հասակում

Ուրախ, անհոգ մանուկը կտրվում է արտաքին աշխարհից, նա դառնում է վշտոտ: Այս դժբախտութեանը շատ ծանր է անդրադառնում ծնողների վրա:

Մանուկ Նիկողայոսին բուժելու և նրան կույրեցիկինախառուտ տեղավորելու մտադրութեամբ, հայրը լք

վորդուն տանում ե Մոսկվա և Պետերբուրգ: Բժշկությունն անդոր ե գտնվում, իսկ ինստիտուտի դիրեկցիան մերժում ե նրա դիմումը:

Նիկողայոս Տիգրանյանի յերաժշտական ընդունակությունները հանդես են գալիս վաղ հասակից: Տակավին Ալեքսանդրապոլ յեղած ժամանակ, նա իր ծննդավայրում շատ եր լսել արևելյան յերաժշտության ներկայացուցիչներին. Գյումրին հայտնի յերտեղական և յեկվոր թառխտներով, քամոնչխտներով, վորոնց մեջ կային նաև լավ յերգիչ-աչուրներ: Այս բոլորը անջնջելի տպավորություն են թողնում մանուկ Նիկողայոսի վրա:

Պետերբուրգի և Մոսկվայի անհաջող ճամբորդությունից հետո, Նիկողայոսի ծնողներն իրենց վորդուն տանում են Թիֆլիս, ուր նա սկսում ե դաշնամուրի և գերմաներենի դասեր առնել: Յերկու տարի ասլուելով Թիֆլիսում, վորն այդ ժամանակ համարվում եր Անդրկովկասի յերաժշտական կենտրոնը, Նիկողայոսը բավական մոտից ծանոթանում ե յեվրոպական և ուսանական յերաժշտությանը: Նա առանձնապես հետաքրքրվում եր բոլոր ազգությունների ժողովրդական պարեղանածիներով: Այս ուսումնասիրությունից բացի, Տիգրանյանը քաջ ծանոթանում ե դաշնամուրի նվագին: Միաժամանակ սկսում ե յուրացնել գերմաներեն լեզուն:

Յերկու տարիս սիստեմատիկ և լուրջ պարապմունքից հետո, 1873 թվին, Թադեսո Տիգրանյանը իր վորդուն տանում ե Վիեննա: Արտասահմանցի լինելու հանդամանքը մեծ դժվարությունների աւելթ ե տալիս ինստիտուտ մտնելու համար:

Վիեննայի կույրերի կայսերական ինստիտուտի դիրեկտոր պրոֆեսոր Մ. Պարլասեկին 17 տարեկան պատանուն վերցնում ե իր պանսիոնում, իսկ ինստիտուտում նրան հնարավորություն են տալիս անցնելու բոլոր առարկաները: Այստեղ անհրաժեշտ ե արձանագրել, վոր ինստիտուտի բոլոր դասախոսներն առանձին ուչադրություն են դարձնում Նիկողայոս Տիգրանյանի վրա:

Վիեննայի կույրերի կայսերական ինստիտուտի բոլոր ուսանողներն, ինչպես հայտնի յե, ընդհանուր կրթություն ստանալուց անմիջապես հետո, պարտավոր եյին վերջին կուրսերում նվիրվել վորևե մասնագիտության. Նիկողայոս Տիգրանյանը անշուշտ չեր կարող բացառություն կազմել: Մասնագիտական ընտրությունը թողնվում եր ուսանողի հայեցողությանը:

Նիկողայոս Տիգրանյանն իբրև մասնագիտությունը ընտրում ե յերաժշտություն: Տարիներ շարունակ, Տիգրանյանը լուրջ կերպով դբազվում ե իր ընտրած մասնագիտությամբ: Նա դաշնամուրի դասեր ե վերցնում Վիեննայի կոնսերվատորիայի հանրաժանութ պրոֆեսոր Շեներից: Տիգրանյանը Վիեննայում ապրում և սովորում ե ընդամենը յոթ տարի:

1880 թվին, ավարտելով ինստիտուտի լրիվ դասընթացները, լավ ուսումնասիրելով յերաժշտության տեսությունը և գերմանական, ինչպես նաև միջազգային յերաժշտական գրականության անվանի վարպետների ստեղծադրծությունները, Տիգրանյանը վերադառնում ե իր ծննդավայրը — Ալեքսանդրապոլ քաղաքը:

Մի տարի անց, 1881 թվականին, վախճանվում է յերաժշտագետի հայրը՝ Թադեոս Տիգրանյանը: Հոր մահը մեծ վիշտ է պատճառում վորդուն: Այդ վշտի ծանրութեան տակ Նիկողայոս Տիգրանյանը, իբրև իրենց տան ավագը, պետք է մտահոգվեր ընտանեկան-նյութական հոգսերով: Տարիներ շարունակ, յերաժշտագետը մեծ սիրով կատարում է ծնողական-ընտանեկան իր պարտականութիւնը:

Վերադառնալով հայրենիք, Նիկողայոս Տիգրանյանը սկսում է դբադվել յերաժշտական ստեղծագործութեամբ: Նա հատուկ ուշադրութիւն է դարձնում անդրկովկասյան ժողովուրդների յերաժշտութեան վրա, գրի առնելով բավական հարուստ նյութ: Այդ հետաքրքրութիւնը նա ցույց եր տվել տակավին Թիֆլիսում սովորելիս, նախ քան Ալստրիայի մայրաքաղաք մեկնելը: Առանձին ուսումնասիրութեան նյութ գարձնելով հայկական, վրացական և քրդական պար-յեղանակների և ժողովրդական յերգերի վրա, Տիգրանյանը հետագայ տարիներում մեծ սեր է ցուցարեում իրանական կլասիկ յերաժշտութեան հանդէպ, վոր և հետագայում դառնում է յերաժշտագետի ստեղծագործութիւնների հիմնական առանցքը:

1887 թվին, Մոսկվայում լույս է տեսնում Տիգրանյանի առաջին յերկը «Անդրկովկասյան ժողովրդական յերգեր և պարեր»:

1893 թվականին, յերաժշտագետ Տիգրանյանը, յերաժշտական նոր ուսումնասիրութիւնները նպատակով, մեկնում է Պետերբուրգ: Նա ներկայանում է կոմպոզիտոր Ռիմսկի-կորսակովին և Սուլվյովին: Մի ամբողջ տարի, նա սխտեմատիկ յերաժշտական տե-

սութեան դասեր է վերցնում Սուլվյովից: Մի տարվա կանոնավոր պարամունքները խոշոր իմպուլս են հանգիստանում Տիգրանյանի հետագա ստեղծագործութիւնների համար: Ապրելով Պետերբուրգում, Տիգրանյանը լայն հնարավորութիւն է ունենում յսելու ոուս դասական յերաժշտութեան լավագույն յերկերը: Նույն այդ թվին, Տիգրանյանը լույս է ընծայում իր յերկերորդ յերկը «Բայաթի փյուրդ» դաշնամուրի համար, վորից հետո վերադառնում է հայրենիք: Տարիների ընթացքում նա շարունակում է գրի առնել իրանական ժողովներ, ինչպես նաև հայկական յեղանակներ:

1896 թվին, լույս են տեսնում «Բայաթի շիրազ», իսկ հետագայ տարիներում «Հեյդաթի», «Շահնագ», «Զարգահ», «Հայկական յերգեր» և այլ աշխատութիւններ, բոլորն էլ դաշնամուրի համար գրված:

Նիկողայոս Տիգրանյանի անդրանիկ համերգը կայանում է 1894 թվի ապրիլի 22-ին Պետերբուրգում: Այդ համերգում կատարվել են իրանական, հայկական, վրացական և քրդական մեղրդիաներ. ծրագրում յեղել են թե՛ սպաղիւր և թե՛ անտիպ աշխատութիւններ: Վերոհիշյալ համերգի մասին արժանավայել կերպով արտահայտվել են՝ «Новости», «Петербургская газета» և այլ հանդեսներ ու որաթերթեր:

Տիգրանյանի յերկերորդ համերգը, մասամբ նոր ծրագրով, կրկնվում է 1898 թվին Պետերբուրգի կոնսերվատորիայի դահլիճում, վորտեղ ներկա են յեղել կոնսերվատորիայի պրոֆեսորները, ուսանողութիւնը և արվեստի ու գրականութեան ճակատամասի աշխատողները: Այդ համերգի մասին, մեծ գովեստով խոսում են «Journal de St. Peterbourg» (Փրանսերեն),

«St. Petersburger zeitung» (գերմաներեն) և «Петербургские ведомости» թերթերը:

Յերաժշտության տեսաբան և քննադատ Սոլովյովը «Новости» լրագրում գրում է.

«Տիգրանյանն իր պիեսների մեջ շատ հարազատ կերպով է ըմբռնել արևելյան յեղանակների վրդին, յեթե չենք սխալվում, կովկասյան յեղանակների նմանորինակ մանրագին, ուղիղ և գեղարվեստական մշակում մեր յերաժշտական աշխարհում կատարվում է առաջին անգամ»:

«Петербургская газета», անդրադառնալով Տիգրանյանի համերգին, գրում է.

«Տիգրանյանի յեղանակները, վորոնք ունեն աղբյուրն բնավորություն, շատ հետաքրքիր են բովանդակության կողմից»:

Պահպանողական «Новое Время» խոսելով Արևելյան յերաժշտության մասին, իր խոսքը կոնկրետացնում է Տիգրանյանի մասին, նշելով հետևյալը.

«Ինչպես այս գործի առաջին պիոներ, Տիգրանյանը ամենից առաջ արժանի յե կատարյալ համակրանքի և աջակցության. ստանալով յերաժշտական լուրջ կրթություն, նա կարող է մեծ ծառայություններ մատուցանել կովկասի յերաժշտագիտությանը, վորի մասին, մինչ նա, վրչինչ չի արված մինչև այժմս Ռուսաստանի այս հարուստ մասում ապրող յեվրոպացիներին ձեռքերով»:

Այնուհետև Նիկողայոս Տիգրանյանը մի շարք համերգներով հանդես է գալիս Անդրկովկասյան բաղմաթիվ քաղաքներում:

Նիկողայոս Տիգրանյանն իր ստեղծադործությունների համար նյութ էր քաղում այն բոլոր հայ, վրացի, քուրդ և պարսիկ նվագողներից ու յերգիչներից, վորոնք գալիս էին Ալեքսանդրապոլ: Այս տեսակետից յերաժշտագետին բավական հարուստ մատերիալ է ավել Մելիք-Աղամալյանը (1830—1906), վորն իր ժամանակին, Անդրկովկասում համարվում էր անվանի բառիստ: Նրա համբավը տարածված էր Անդրկովկասի սահմաններից դուրս: Նա նվագում էր նաև քամանչա: Տակավին չափազանց յերիտասարդ, նա մեծ վարպետությամբ և հուզականությամբ նվագում էր արևելյան ամենաբարդ ու դժվարին յեղանակները: Մելիք-Աղամալյանի ծրագրում խոշոր տեղ էլին դրամվում իրանական կլասիկ յեղանակները:

Անհրաժեշտ է արձանագրել, վոր Տիգրանյանի մեջ սեր դեպի արևելյան յերաժշտություն զարթեցրեց Մելիք-Աղամալյանը: Նրա նվագի ու խորհրդի աղբյուցության տակ, Տիգրանյանը վերջնականապես նվիրվում է իրանական յերաժշտության մշակույթին: Այս սերն ու ցանկությունը կրկնապատկվեց հատկապես այն շրջանում, յերբ նշանավոր թառիստը Յերևանից տեղափոխվեց Ալեքսանդրապոլ: Այս բանին վորոշ չափով ոժանդակել է նաև հայտնի իրանական յերգիչ Սաթթարը:

1912 թվին արդեն Տիգրանյանի հրատարակած յերգերի (opus) թիվը կազմում է տասը, ուր ամփոփված են 35 կտոր գործ:

1914 թվի հունիսի 1-ին, Ալեքսանդրապոլ քաղաքի հասարակական և արվեստի կազմակերպությունները մեծ հանդիսավորությամբ տոնում են յերաժշտ-

տաղետի յերաժշտական գործունեյության 25 ամյակը : Այդ առթիվ հայկական մամուլը բավական մեծ տեղ է հատկացնում Տիգրանյանի կյանքին և յերաժշտական ստեղծագործություններին :

1914 թվին, Նիկողայոս Տիգրանյանը մեկնում է արտասահման, Բերլին և Վիեննա, տալով իր սեփական ստեղծագործություններից մի շարք համերգներ : Այդ համերգների շուրջն արտահայտվում են գերմանական և ավստրիական թերթերը :

Համաշխարհային պատերազմի տարիներին, Տիգրանյանն ապրում է իր ծննդավայր—Ալեքսանդրապոլում :

Հայաստանի խորհրդայնացումից հետո, Տիգրանյանն իր բոլոր ստեղծագործական ուժերը նվիրում է խորհրդային Հայաստանի յերաժշտական կուլտուրայի վերելքին :

Ալեքսանդրապոլ քաղաքի Լուսբաժնի հանձնարարությամբ, 1921 թվին Տիգրանյանն իր հայրենի քաղաքում կազմակերպում է յերաժշտական սեկցիա—ստուդիա, մեկ ու կես տարի ղեկավարելով այդ ստուդիան :

1921 թվին սեպտեմբերին, ՀՍՍՀ Ժողկոմխորհի վորոչման համաձայն, Նիկողայոս Տիգրանյանն ստանում է վաստակավոր գրական—գեղարվեստական գործչի կոչում :

1922 թվին Տիգրանյանն Ալեքսանդրապոլում հիմք է դնում կույրերի դպրոցի, վորտեղ ավանդվում է նաև յերաժշտություն : Այս գործին խոշոր մասնակցություն է բերում անվանի արվեստագետը :

Հայաստանի խորհրդայնացումից հետո, Տիգրանյանը մի շարք համերգներում հանդես է գալիս Յերևանում, Լենինականում, Թիֆլիսում և այլ քաղաքներում :

1927 թվի հունվարի 20-ին, Լենինգրադի Պատմության և Կուլտուրայի Պետական Ակադեմիկ ինստիտուտի հրավերով, Տիգրանյանը կարդում է մի հետաքրքիր զեկուցում արևելյան յերաժշտության մասին : Այդ զեկուցմանը ներկա յեն գտնվել ակադեմիկոսներ, պրոֆեսորներ և յերաժշտագետներ : Իր ներածական խոսքում, ակադեմիկոս Մառը կանգ է առնում Տիգրանյանի կատարած խոշոր գերի վրա : Տիգրանյանի այդ զեկուցման մի քանի կարևոր կետերը լույս են տեսել «ЖИЗНЬ ИСКУССТВА» հանդիսում (1927 թվի փետրվարի 15, № 7) :

1933 թվի ապրիլ ամսին, ՀՍՍՀ խորհրդային Կոմպոզիտորների Միությունը Լենինականում տոնում է Նիկողայոս Տիգրանյանի յերաժշտական գործունեյության 50-ամյակը : Այս առթիվ հայկական ԽՍՀ-ն նրան շնորհեց հանրապետության Ժողովրդական կոմպոզիտորի կոչում :

Հայաստանի խորհրդայնացումից հետո, տարբեր հրատարակությունների միջոցով լույս են տեսել Նիկողայոս Տիգրանյանի թե՛ տպված և թե՛ անտիպ աշխատությունները : 1935 թվին ՀՍՍՀ Պետական հրատարակչությունը լույս բնծայեց Ժողովրդական Կոմպոզիտոր Նիկողայոս Տիգրանյանի «Հայ ժողովրդական պարերի» ժողովածուն, Ռ. Թերլեմեզյանի ներածական հոդվածով : Այս ժողովածուի մեջ ամփոփված են տաս հայկական պարեր :

1920-1921
1922
1923



1927 թվին Լենինգրադում լույս տեսավ Գյումրե-
ցու աշխատությունը «Նիկողայոս Տիգրանյանը և Ա-
րևելյան յերաժշտություն», վորի առաջաբանը գրել
էն Ալեքսանդր Սպենդիարյանը և սկզբնիկոս Մաուր:

3.

Հանրապետության ժողովրդական կոմպոզիտոր
Նիկողայոս Տիգրանյանն իրը ստեղծագործող հանդես
յեկավ անցյալ դարի վերջերին: Նրա առաջին յերկը
լույս տեսավ 1887 թվին:

19-րդ դարի վերջին քառորդին, հայ յերաժշտա-
կան կուլտուրայի ճակատամասում սեղի են ունենում
նշանակալից տեղաշարժեր:

Յերաժշտագետների մի սակավաթիվ խումբը ըս-
կսում է հավաքել, մշակել և զեղարվեստականորեն
վերարտադրել թե՛ հայկական ժողովրդական, թե՛ հո-
գևոր և թե՛ արևելյան բաղձապիսի յեղանակներ: Այս
աշխատանքի գլխավոր զեմքերը կովկասահայ իրակա-
նության մեջ համարվում էին Կարա-Մուրզան, Մա-
կար Յեկիմալյանը, Նիկողայոս Տիգրանյանը և Սողո-
մոն Գեվորգյանը (Կոմիտաս):

Կարա-Մուրզան, ժողովրդական յերգի այդ անդ-
բանիկ պիոներներից մեկը, իր ժամանակին հավաքեց
ու մշակեց բաղձաթիվ ժողովրդական յերգեր՝ մեներ-
գի և խմբերգի համար. նրա թողած յերաժշտական
ժառանգության մեջ կան նաև աղբայնական մոտիվ-
ներ:

Մակար Յեկիմալյանն ամբողջապես կլանվեց հոգե-
վոր յերգերի մշակույթով: Այդ յերգերի մեջ նա թա-

փեց իր վողջ ստեղծագործական կարողությունները:
Յերաժշտագետի կողմից մշակված ժողովրդական յեր-
գերը խոշոր գեղարվեստական արժեք չեն ներկայաց-
նում:

Նիկողայոս Տիգրանյանն, վորն այդ սերնդի ավագ
ներկայացուցիչներից մեկն էր, գլխավորապես նվիր-
վեց իրանական յերաժշտության մշակույթին, աչքա-
թող չանելով նաև հայկական ժողովրդական պարե-
ղանակները: Նրա յերաժշտական ժառանգության մեջ
կան նաև վրացական և քրդական մեղոդիաների մշա-
կումներ:

Կարա-Մուրզայի, Մակար Յեկիմալյանի արվեստը
ընթացավ վոկալ արվեստի ուղիներով: Տիգրանյանն
իր վողջ ուշադրությունը կենտրոնացրեց դաշնամու-
րային յերաժշտական գրականության վրա, դառնալով
կովկասահայերի մեջ այդ արվեստի հիմնադիրը: Ընչտ
է, վոր անվանի վարպետն իր յերաժշտական գործու-
նեյության ընթացքում դրադվել է նաև վոկալ արվես-
տի մշակույթով, սակայն եպիդոդիկ կերպով միայն:
Նիկողայոս Տիգրանյանը հայ յերաժշտության պսոտ-
մության մեջ իր պատվավոր տեղն ունի իբրև դաշնա-
մուրային գրականության ներկայացուցիչ:

Յեթե Կարա-Մուրզան վերցնում էր վորևե մեղո-
դիա և այն մշակույթի յենթարկում, յենելով իր
ստեղծագործական սկզբունքներից, և յեթե Մակար
Յեկիմալյանը մշակույթի էր յենթարկում հոգևոր յեր-
գերը, մոտենալով այդ մշակույթին իր ստեղծագոր-
ծական սկզբունքներով, ապա նույնպիսի աշխատանքի
մեթոդ էր կիրառում նաև Նիկողայոս Տիգրանյանը:
Առաջին յերկուսը մոտենում էին վոկալ արվեստին

իրբն հում նյութի, Տիգրանյանը մտանալով նույն վորակի յերաժշտական մատերիալի, այն բոլորը արտահայտում էր դաշնամուրի հնչյուններով: Աշխատելով յերաժշտական կուլտուրայի վոկալ և ինստրումենտալ բնագավառներում, անցյալ դարի վերջում իր յերաժշտական գործունեությունն սկսած այդ յեռյակը, ի վերջո ձգտում էր միևնույն նպատակի—հավաքել, կորստից փրկել և մշակույթի յենթարկել բազմահարուստ յերգերը: Այս տեսակետից խոշոր գործ է կատարել յերաժշտական յեռյակի յուրաքանչյուր անդամը:

Նիկողայոս Տիգրանյանն իբրև ստեղծագործող չտահմանափակվեց ազգային յերաժշտության շրջանակում: Մեկը—Աղամալյանի հիասքանչ նվագը նրա մեջ խոշոր հետաքրքրութուն գարթեցրեց դեպի արևելյան յերաժշտություն, ուր իբրև գլխավոր Փակտոր կարեվոր դեր է խաղում իրանական կլասիկ յերաժշտական արվեստը:

Վերցնելով բազմապիսի մելոդիաներ, հատկապես մուղամաթներ, Տիգրանյանն այդ բոլորը վերածել է յեվրոպական յերաժշտության չափի և սկզբունքներին: Թառի և քամանչայի վրա հնչող յելեվեջները անշուշտ նույնությամբ չեյին կարող հնչել դաշնամուրի ստեղնաշարերի վրա: Տիգրանյանի գլխավոր մտահոգությունն էր հիմնականում պահպանել մելոդիայի հարադատությունը: Գործադրության դնելով յեվրոպական յերաժշտության չափն ու սկզբունքները, Տիգրանյանը կարողացել է պահպանել իր մշակած յեղանակների ընդհանուր կառուցվածքն ու վոճը: Յեվ յեթե յերբեմն վորոշ հնչյուններ, վորևե մելոդիայի և յե-

րաժշտական հյուսվածքի վորոշ ողակներ նշաններ են ցույց տալիս չեղվելու ընդհանուր յերաժշտական պատկերից, ապա այդ չափադանց հաղվաղյուտ է և հիմնականում կարևոր դեր չի խաղում Տիգրանյանի մշակույթների մեջ:

Ինչպես նշեցինք Նիկողայոս Տիգրանյանն աշխատել ու ստեղծագործել է դաշնամուրի համար: Սակայն Հայաստանի խորհրդայնացումից հետո, հատկապես վերջին տարիները, հարգելի արվեստագետը ավելի քան ընդարձակել է իր ստեղծագործական տեսագաշտը: Դաշնամուրի համար դրած իր մի շարք կարեվոր աշխատությունները նա վերածել է սիմֆոնիկ նվագախմբի, լարային կվարտետի, տրիոյի (Չութակ, Թավլութակ և դաշնամուր): Այս տեսակետից Նիչատակության արժանի յեն «Չարգախ», «Բայաթի ֆուրդ», «Թարս պար», «Դյուզ պար», «Շարաշուբ», «Հետ ու առաջ», վորոնք գրված են սիմֆոնիկ նվագախմբի համար: Յերաժշտագետը լարային կվարտետի յե վերածել «Բայաթի Շիրագ», «Չոբան բայաթի», «Նավրուզ արաբի» և «Չուռնի տրեգի»:

Խոսք չի կարող լինել այն մասին, վոր սա նոր վորակ և նոր թռիչք է յերաժշտագետի ստեղծագործությունների համար: Այս աշխատանքին նա ձեռնարկեց խորհրդային կարգերում, յերբ պատկառելի արվեստագետի առաջ բացվեցին ստեղծագործական ավելի լայն հեռանկարներ:

Նիկողայոս Տիգրանյանը մեր յերաժշտական կուլտուրայի այդ ավագ դեմքը, իր հարուստ կյանքի 55 տարին, ավելի քան կես դար, անցկացրեց ստեղծագործական բարդ ասպարիզում: Նա աշխատեց անխոնջ

ու համեստ, մեղ ժառանգութիւնն թողնելով հարուստ մի գանձ, վորն այսօր և վաղը լուրջ ուսումնասիրութեան առարկա պետք է դառնա: Հարգելի արվեստագետն աշխատում է նաև այսօր, ութսունամյա հասակում, նա աշխատում է վառվռուն յերկտասարդի նման:

Նիկողայոս Տիգրանյանի արվեստը իր մեջ ունի ժողովրդական յերգի դեմոկրատիկ ուժեղ շեշտ. այս տեսակետից նույնպես չափադանց գնահատելի յե նրա մատուցած ծառայութիւնը մեր յերաժշտական կուլտուրային:

Նիկողայոս Տիգրանյանն այն առաջավոր մտաւորականներուց եր, վորոնք Հայաստանի խորհրդայնացումից հետո, իրենց ստեղծագործական վողջ կարողութիւնները ի սպաս դրեցին Հայաստանի խորհրդային յերաժշտութեան ծաղկմանը: Նա իր սիմֆոնիկ, լաբային և այլ ժանրի գործերը գրեց այն ժամանակ, յերբ մեր յերկրում ծածանեց խորհուրդները փրկարար դրոշը:

Նիկողայոս Տիգրանյանն իր արժանի գնահատականն ստացավ խորհրդային կարգերում: Հայկական ԽՍՀ Կառավարութիւնը նրան սովեց հանրապետութեան ժողովրդական կոմպոզիտորի և աշխատանքի հերոսի կոչում: Նա արժանացավ խոշորագույն պատվի:

Հայաստանի խորհրդայնացման 14-րդ տարեդարձին, հարգելի արվեստագետը «Սորհրդային Արվեստ» հանդեսում, դուզահեռ անցկացնելով ցարական և խորհրդային իշխանութեան միջև գրում եր.

«Յարական Ռուսաստան և նրա հետամնաց գաղութ Հայաստան: Մենք, հին սերնդի ներ-


կայացուցիչներս շատ լավ ենք պատկերացնում խաւարի, տգիտութեան, բռնակալութեան այդ արյունոտ թագավարութիւնը: Բայց նա արդեն անցյալի դիրկն է անցել, նա լոկ ծանր մղձաւանջ է այժմ: Հոկտեմբերյան մեծ հեղափոխութիւնը թաղեց այդ ամենն անվերադարձ կերպով: Մենք այժմ կերտում ենք նոր կյանք, նոր աշխարհ, նոր կուլտուրա:

Հենց Սորհրդային Հայաստանի յերաժշտական կյանքում մեր նվաճումները չափադանց մեծ են: Ո՞վ կարող եր անցյալում յերազել հայկական ոպերայի մասին: Իսկ մենք այսօր ունենք մեր ոպերան: Յեվ վոչ միայն ոպերա: Մենք ունենք պետական կոնսերվատորիա, պրոֆյետաժշտական դպրոցներ Յերևանում, Լենինականում և Կիրովականում, Յերևանի Հայլֆիլհարմոնիան, Կոմիտասի անվան կվարտետը և այլն:

Այս նվաճումներով, սակայն չպետք է հանդրստանալ: Սորհրդային ստեղծագործողի առաջ դրված խնդիրները մեծ են և պատասխանատու: Մեղ վրա պարտականութիւն է դրվում տալ մեր աշխատավորութեանը խոշոր արժեք ներկայացնող նոր ստեղծագործութիւններ և մենք պարտավոր ենք կատարել այդ:

Վստահ եմ, վոր կկատարենք»:

Ձերմ վողջույն մեր հոբելյարին, Հայկական Սոցիալիստական Սորհրդային Հանրապետութեան ժողովրդական կոմպոզիտոր և աշխատանքի հերոս Նիկողայոս Տիգրանյանին:



Գլավիտի լեզրը Ա.— 1198
Հրատ. 3961. Պատվեր 1505 Տիրաժ 2000
Յերբվան, Պետրատի տպարան, 11 Կնունյանցի, № 4

«Ազգային գրադարան»



NL0308550

Գրքեր 20 Կ.

19

Р. ТЕРЛЕМЕЗЯН

Ник. Тигранян

Гиз ССР Армении, Ереван, 1936 г.